

ընդունելի եղան, այլ մեկդի ձգուեցան իբրեւ անկարելի բան : Իսկ հիմա որ լեզուագիտութիւնը շատ աւելի ծաղկածէ եւրոպայի մէջ, այս խնդիրը դժուար ալ ըլլայ՝ անկարելի չէ, եւ խիստ հաւանական է որ կատարուի : Հիմաւորեն եղած առաջարկութիւններէն մէկը առ է, որ Պարոն Փեօ անունով գաղղիացուն ըրածն է : Այս պարոնը կառաջարկէ որ ամեն ազգ իր մայրենի լեզուն գիտնայ ու պահէ. բայց աշխարհիս բոլոր քաղաքակիրթ ազգերն ալ խօսք դնեն մէջերնին որ մեծ ժողով մը ըլլայ, եւ այն ժողովին պարտքն ըլլայ համաշխարհական լեզու մը ընտրել. իւրաքանչիւր ազգ ալ պարտաւորուի այն լեզուն ընդունիլ, իր ազգային լեզուին հետ մէկտեղ սորվիլ ու դպրոցներուն մէջ սովորեցնել : Եւ այս լեզուն հիմաւորան կենդանի լեզուներէն մէկն ըլլայ կրսէ,

հին կամ մեծեալ լեզուներէն չկրնար ըլլալ : — Այս առաջարկութիւնը որչափ որ պարզ է, այնչափ ալ դժուարութիւնները յայտնի են. ոչ միայն անոր համար որ ամեն ազգի իր լեզուն ուրիշներէն աւելի դիւրին կերեւնայ, հապա նաեւ անոր համար որ եւրոպայի ամեն լեզուներն ալ (որովհետեւ ընտրուելիքը հարկաւ անոնցմէ մէկը պիտի ըլլայ) իրարմէ աւելի պակաս դժուարութիւններ ունին :

Ամենէն աւելի խելքի յարմար հնարքը պիտի ըլլայ անշուշտ՝ որչափ որ կարելի է արդէն տարածուած լեզուներուն արմատական տարերքն առնուլ, ու անոնցմով նոր լեզու մը ձեւացընել այնքան դիւրին որ ամեն մարդ կարենայ *մէկ ամսուան մէջ* սովորիլ :

ՌԱՄԿԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳՂՈՒՄ ԵՐԿՐՈՐԳ՝

Թէ դրսի առարկաներն ու զգայարանաց ոյժը ինչպէս կրճամեմատին իրարու հետ :

Ա. Որպէս զի մեր զգացմունքը որոշ ըլլայ, պէտք է որ այլ և այլ առարկաներուն ազդեցութիւնը՝ մեր զգայարանաց կազմուածքին հայելով՝ չափազանց սաստիկ չըլլայ : Եւ յիշատի :

ձաշակելիք. Կերակուրը չափէ դուրս տաք որ ըլլայ, չէս կրնար համն առնել :

Հոտոտելիք. Չափազանց սուր հոտը ոչ միայն ջրոդուր որ հասկընաս քէ ինչ հոտ է, հապա նաեւ գլխուցաւ կը պատճառէ քեզի :

Շօշափելիք. Սաստիկ ցուրտէն փայտ կը դառնայ ձեռքդ ու իր շօշափական զգացմունքը կը կորսնցընէ :

Տեսանելիք. Արեւուն լուսոյն՝ սաստկութեանը պատճառաւ՝ չէս կրնար աչուրնէրդ տնկած համարձակ նայիլ վրան :

Լսելիք. Շատ մը զանգակները սաստիկ ուժով որ զարնուին, անոնց ձայնին մէջ եղած ներդաշնակութիւնը չէս կրնար գտնել :

Երբոր առարկաները չափէ դուրս սաստիկ ազդեցութիւն մը կը նեն զգայարանաց վրայ, զգայարաններն իրենց փափկութիւնը կը կորսնցընեն, ու մինչեւ բոլորովին ալ կը բնորոշին. այսպէս, օրինակի համար, մէկն որ շատ մօտեւայ Նեղոս գետին Քաճատուփասըստած ջրվեժին, որ աշխարհիս ամենաբարձր ջրվեժներէն մէկն է, շրին վար իյնալուն շառաւմունքէն ականջը կը խլանայ, ու քիչ մը ատեն այն շառաւմունքը ականջէն չէրբար. Եւ Ստրաբոն կրսէ քէ ձախին կամ ջրոտ ու հոտած տեղերու բնակիչները հոտառութիւն չունին :

Այս չափազանց ազդեցութիւնները կրնանք երբեմն պակսեցընել՝ քէ որ մեր զգայարանացը հասնելէն առաջ ուրիշ միջոցէ մը անցընենք. օրինակի համար, քէ որ մրտտած ապակի մը բռնէս աջքիդ դիմացն ու այնպէս նայիս արեւուն, եւ կամ ջրով լեցուն դոյլի մը մէջ զարնել տաս արեւը, առանց դժուարութեան կը տեսնես լուսինն արեգական առջեւէն անցնիլ :

Ասոր ներքեւ, չափէ դուրս տկար լոյսը կրնայ խաբէական երեւոյթներու պատճառ ըլլալ. ուստի ծիրանեգոյն լարը մընագոյն կերեւնայ քեզի՝ քէ որ ջորս դին եղած լոյսը տկար է. գեղեցիկ կապոյտն ալ՝ կանրեղին մարմրած լուսովը կանաչ կերեւնայ : Խանութիւնները կը նային որ իրենց խանութին մէջը սաստիկ լոյս չըլլայ. կամաւ ալ կը մըրընցընեն խանութինն որ իրենց վաճառքին պակասութիւնները չտեսնես :

Բ. Մարդու զգացմունքները կը շփոթին ոչ միայն իրենց վրայ եղած ազդեցութեանը չափէ դուրս սաստիկ կամ տկար ըլլալէն, հապա նաեւ այն ազդեցութեանը չափէ դուրս արագ կամ դանդաղ ըլլալէն :

Շաղակրատին նայէ. ինք տասը հատ գնտակը հարիւրի չափ կերեւցընէ աջքիդ իր աճալարարութեամբը. երբեմն կարծես քէ խիճէր կը կլլէ, երբեմն ալ բերնէն երկայն երկ (շէրիւ) մը կը նանկէ. մէյմը կը նայիս, սեղանատախտակին մէջտեղէն գնտակ մը կանցընէ, մէյմալ տեսնես՝ վարունգը ճագարի կը դարձընէ, եւ այլն : Բոլոր այս երեւոյթներու պատճառ, ինչպէս որ դիւրին է հասկընալը, շաղակրատին ձեռքին սաստիկ արագութիւնն է, եւ անիկայ է որ բող չտար քեզի շարժմունքները կարգաւ դիտել ու տեսնել. սաստիկով է որ երբ գտազան մը շուտ շուտ աչէն ձախ ու ձախէն աչ շարժես՝ հովահարի ձեւ կառնէ, ստամոտոր անիւնը շուտ որ պտըտցընես՝ կըս-կոր շրջանակ մը

Տես Առաջին գլխուրը Յունուարի ամսաբերին մէջ :

կերեանայ, ու բնարի մը պիտի լարը քէ որ ուժով բրբռացընէս, ճուսմէի տեսք կառնու :

Այս երեւոյթները կըցուցնեն որ զգայարանաց վրայ եղած տպաւորութիւնը՝ ոչ միայն չղաղրիր այն տպաւորութեան պատճառին դաղրելովը, նապա նաեւ քիչ մը աւելի կերկրնայ, այնպէս որ երկրորդ տպաւորութիւնն որ գայ՝ առջինին նետ կըխառնուի, ու չրոգուր որ այն երկուքին մէջտեղը միջոց մը կամ ուրիշ տկար առարկայ մը կայ նե՛ իմացուի : Ուստի, քէ որ մէջտեղը ծակ ունեցող շրջանակ մը պտըտցընէս ու անոր էտեւը վառած ճրագ մը դնես, քանի որ շրջանակը այնչափ շուտ չպտըտիր որ ինը մանրերորդի մէջ մէկ շրջան մը ընե՛ ճրագը միշտ կերեանայ ծակին էտեւէն : Ո՛րչափ որ առարկան լուսաւոր է ընդարձակ է, ու ճրչափ որ երկար առեւն քչէ անոր մեր վրայ պատճառած զգացմունքը, այնչափ քիչ արագութիւն հարկաւոր է շրջանակին դառնալուն : Վերը յիշուած երեւոյթներուն՝ զգացմանց երկարատեւ ըլլալէն ու համեմատական սաստկութենէն ըլլալը անկէ՛ց ալ յայտնի է որ հատուածակողմ սպակիին եօթը գոյները երբոր շուտ շուտ պտըտցընէս, բոլորը մէկէն մութ ձերմակ կերեւան, էս որչափ որ շարժմունքը շուտ ըլլայ՝ այնչափ ալ ձերմակը մութիւնը կըկորսընցընէ : (Յայտնի է որ եօթը գունոց խառնուրդէն կըձեւանայ ձերմակը :)

Անոր ներհակ, ժամացուցին ցուցակները անշարժ կերեւան, քեպտ էս իրօր շարժման մէջ են. այսպէս ալ տղու մը հասակին երկընկալը՝ զինքը միշտ տեսնողներուն աչքին չերեւան, տարցուցած պղնձէ գնտակին՝ պաղ եղած ժամանակէն աւելի մեծ ըլլալը չտեսնուիր, էս այլն : Այսպիսի դիպուածներու մէջ եղած խաբէութիւնը դիւրաւ կիմացուի՝ քէ որ փոփոխուած առարկան հաստատուն առարկայի մը նետ բաղդատես. քէ որ, օրինակի համար, ժամացուցին ցուցակը առաջ հիւզերորդ վայրկեանին վրայ էր էս հիմա տասներորդին վրայ է, չէս կրնար տարակուսիլ անոր շարժմանը վրայ. նոյնպէս ալ գնտակը քէ որ տարցընէիդ առաջ դիւրաւ կանցներ պղնձէ օղակի մը մէջէն՝ առանց զգալի պարապ միջոց մը մնալու իրեն ու օղակին մէջ, ու տարցընէիդ էտես՝ ալ չանցնիր նոյն օղակէն, չէս տարակուսիր որ գնտակին զանգուածը աճեր է, քեպտ էս քու աչքիդ չերեւան :

Գ. Մի է հոյն առարկայից մեր զգայարանացը վրայ ալ է ալ կերպով ազդեցութիւն ընելը՝ մեծամեծ տարբերութիւններու պատճառ կրնայ ըլլալ : Իրացընէ,

Ճաշակէլք. Հռչակաւոր Վոյրա բնագէտը ճաշակելեաց զգայարանքին վրայ այս զարմանալի դիտողութիւնս ըրած է : Թէ որ երկու հատ ոլորիկ մետաղի քիքեղ առնուս, մէկը կապարէ ու մէկայը արծըքէ, ու զատ զատ դպցընէս լեզուիդ, քիմրդ ամենեւին զգացմունք մը չունենար. բայց քէ որ այն կերպով բռնես այն մետաղները՝ որ անոնց բերնիդ դուրս եղած ծայրերը իրարու կպած, ու անմիջապէս լեզուիդ դպած ծայրերն ալ մէկմէկու խիստ մօտ ըլլան, այն առեւն աղի կամ քրու համ մը կըզգաս՝ մէկ բանէ մը մէկային անցնող էլէրտրական հոսանքի համին նման :

Հոտոտէլք. Թէ որ բան մը հոտուրտայու առեւն՝ քիչ քիչ բայց ստեպ հոտուրտանք, ու միանգամայն բերաննիս գոցենք, ինչպէս որ կընենք երբոր ախորժելի է մեզի այն հոտը, բոլոր ներս քաշուած հոտաւետ օղը քրէրնէս կըմտնէ ու այն անոյշ զգացմունքը մեր ըղեղին կըհասցընէ. *անոր ներհակ*, քէ որ միայն բերնով հոտուրտանք, կամ քէ հոտառութիւննիս կտրենք ընդհատենք, ինչպէս որ կընենք անախորժ հոտ մը առած առեւննիս, կրնանք անով բոլորովին կամ ըստ մասին ազատիլ անախորժ զգացմունքէն :

Շօշափէլք. Տես հիւզերորդ գլխայն Ֆուցակին մէջ Շօշափէլք, Թիւ և Անդամք :

Տեսանէլք. Մի էս նոյն պատկերը երբոր շատ կամ քիչ լոյս առնու, երբ այս կամ այն տեղէն նայուի, տարբեր տարբեր տպաւորութիւններ կընէ վրանիս, էս կրնայ սրտերնիս շարժել, էս կամ մեր անտարբերութեանը մէջ բողուլ գմեզ :

Լսէլք. Հանդէս * կըսէ քէ մարդիկ տեսեր են որ քեպտ դրսուանց ականջի բացուածք չունէին, բայց իրենց ակուսներուն մէջ հաստատուն մարմին մը բռնած ըլլալով, անոր բրբռալէն սուր ու հաստ ծայրերը իրարմէ կորոշէին. վասն զի այն բրբռմունքը ոսկորներուն անցնէիդ՝ անցնցմէ ալ գլխուն մէջ կըտարածուէին : Ամեն մարդ ալ գիտէ քէ երբ մտիկ ըրած ճայներնիս տկար է, բերաննիս քիչ մը բաց կըբռնենք :

Դ. Որովնետես զգացմունքին պատճառն է՝ առարկաներուն մարդուս զգայարանացը վրայ ըրած ազդեցութիւնը, այնպէս կերեւան քէ քանի որ այն ազդեցութիւնը չղաղրիր՝ զգացմունքն ալ պիտի չղաղրի. բայց իրօր անանկ չէ, հապա մի է հոյն զգացմունքը երբոր կրկնուի, *անոր սաստկութիւնը կըզակսի* : Անոր համար,

Ճաշակէլք. « Շատ բաներ կան որ առջի բերան անախորժ համ մը ունին, կըսէ Տնրուին **. բայց շատ գործածուելով անախորժ համերնիս կըկորսընցընեն » :

« Ո՛ր էս իցէ դեղ ալ երբ չափէ դուրս ստեպ առնուի, կամաց կամաց ոյժը կըկորսընցընէ, ինչպէս ափիոնն ու գինին » :

Հոտոտէլք. « Իմ հոտաւետ բաներու տուփս առաջ իմ քրիս համար է, կըսէ Մանրայն. բայց ուրք օրի չափ գործածելու ետքը՝ ուրիշներուն քրին համար միայն կըլլայ » : Ասով Մանրայն ըսել կուզէ քէ զգացմունքները քանի որ նոր են՝ մեր վրայ մեծ ոյժ կուենան, իսկ ստեւն անցնելով՝ ուժերնին կըզակսի » :

* Չուիցերացի բնագետ : Մ. Թ :

** Անգղիացի բժիշկ էս բանաստեղծ : Մ. Թ :

1 Այս առաջարկութեանս իրենս ապացոյց կըլինէ որ *առաջիկայ*ս բռնած զարշնոտ խեմն որ խալացիք (ինչպէս նաեւ Տոսկընը) *սաստանայի* տղր կանուանեն՝ Հնդկները փափուկ ուտելիքի տեղ կըղնեն, *կերակոր* *սաստանոց* կանուանեն, ու շատը սխտորի տեղ անով կըմամենեն կերակուրները :

2 Տրտմութիւնն ու քանի մը բարոյական ցաւերն ալ կամաց

Շօշափելիք. Թե որ ափիդ մէջը, օրինակի համար, ստակ մը բռնած կենաս, կամաց կամաց անոր ոջ մեւը կըզգաս եւ ոջ պնդութիւնը :

Տեսանելիք. Քանի մը հոգի չեմ գիտեր որ վանքին պարտեզը պտուղներու տուն « Այս ինչ սրանցելի տեսարան է » ըսեր են : Այլատուաւոր եղբայր մը որ ամեն օր կըտեսնէ եղեր այն տեսարանը՝ դարձեր ըսեր է, « Այն, օտարականաց համար : »

Լսելիք. Չայն մը որջափ ալ ախորժելի ըլլայ, բէ որ խիստ շատ կրկնուի, առաջ անտարբեր՝ յետոյ ծանծաղալի բան կըդառնայ :

Հիմայ նոյն բանը ուրիշ մէկ կողմէն ալ նայինք : Կուգէս հասկընալ բէ մի եւ նոյն գործողութիւնները երբոր կրկնուին՝ ինչ ազդեցութիւն կունենան : Միտորդ բեր մէյմը բէ ինչ դժուարութիւն քաշեցիր երբոր բեզի կարգալ գրել սորվեցուցին, ու տես բէ իմայ ինչ դիւրութեամբ կըկարդաս ու կըգրես : Այն ատենը հագիւ մէկ զիրը մէկայէն կորոշիր. հագիւ կրնայիր զիր գրի բով բերելով վանկ մը կազմել. հագիւ վանկերը բով բով բերելով բառ մը կըկապիր. հագիւ բառերը իրարու բով կըշարիր որ կարճ իմաստ մը մեռացընէս : Իսկ իմայ բոլոր այս գործողութիւնները գրեթէ առանց իմանալու կըկատարես :

Նոր դարնակ (*չինգալօ*) սորվող աղջկան մը նայէ. խելքը միտքը մատուցներուն վրայ է. կընայի որ մատուցները ինչ կերպով տեղաւորէ ցուցակներուն վրայ, ինչպէս անցնի մէկ ցուցակէն մէկալը, շարժումները ինչպէս շուտցընէ կամ հանդարտեցընէ, ուժով կամ կամաց կոխէ, առաջ վագէ, կանկ առնէ, էտ դառնայ, թիջ մը կենայ ու նորէն սկսի եւ այլն. վերջապէս բոլոր այս բաներուն մէջ մեծ դժուարութիւն կըքաշէ, ու մտքին բոլոր ոյժը կարողութիւնները ասոնց կուտայ : Քանի մը ամիս դաս առնելէն ետքը՝ այս դժուարութիւնը կըվերնայ. աչքը խազերը տեսածին պէս՝ մատուցները իրենք իրենցմէ կըվագեն գանոնը մեռացընելու, եւ անկեց ետքը գրեթէ բոլորովին չզգայով ասոնց շարժումները՝ բոլոր մտադրութիւնը երաժշտական գեղեցկութեանը վրայ կամփոփէ :

Ուրեմն շատ գործողութիւններ կան որ կրկնուելու ըլլան հէ,

կամաց ուժերնին կըկորսընցընեն ու ետքը ետքը բոլորովին անզգալի կըլլան, եւ այն կեանքն որ անտանելի կերեւանք տանելի կըլլայ :

¹ Գրեթէ առանց իմանալու կ'ըսեմ, վասն զի կ'երեւնայ բէ այս բանիս անելի յանկարծական մոռացութիւն ըսելու է քան բէ ամենեւին չիմացողութիւն : Վասն զի, օրինակի համար, զիրք կարգալը հաշիւ ընելու պէս բան մըն է. իսկ արդ թիւերու երկայն սիւն մը հաշիւ ընողը՝ քաղտ եւ վերջն որ հասնի՝ ամենն ալ կըմոռնայ, բայց տարակույս չկայ որ անոնց ամեն մէկը աչքէ անցուցած ատեն՝ ինչ ըրածը իմացած ալ պիտի ըլլայ :

Այս բանն շատ բաւ կընասկըցուի անգարարին օրինակովը, որ աջ ձեռքին վրայ մէկ գաւազան մը շփիշտակ ուղղահայեաց բռնած, ձախին վրայ ալ ուրիշ գաւազան մը, չուանին վրայ ինքզինքը հաւասարակշռութեան մէջ կըպանէ : Այս օրինակիս

Ա. Տպաւորած զգացմունքնին կըպակսի :

Բ. Մտքին անոնց հետ ունեցած գործողութիւնները կամ թէ գաղափարաց ու զգացմանց շարժմունքները կըզիրանան ու կըշուտնան :

Գ. Մկանանց ճարպկութիւնը կաւելնայ :

Երբոր կըսուի բէ մի եւ նոյն զգացմունքը ատեն անցնելով կըտկարանայ, գիտնալու է որ չորս տեսակ պայման կայ այս խօսքիս իրաւ ըլլալուն, եւ առանց անոնց սուտ է : Առաջինը այս է որ այն զգացմունքը ներդաշնակութեամբ չգեղեցկանայ : (Մի եւ նոյն ձայնը որ միևնակ կրկնուելով՝ մահու չափ ծանճրութիւն կըբերէ երաժշտին, կրնայ առանց ծանճրութեան կըրկնուի նոյն երաժշտին մի եւ նոյն օրուան մէջ) : Երկրորդ, զգացմունքը այլ եւ այլ գաղափարներով կենդանութիւն մը պիտի չառնէ : (Ուստի երկրացափ մարդը կրնայ բոլոր կեանքը ինկզ վեց հատ մեւերու մէջ անցընել, որ մտածութեամբ ուռճացած մտքին գուարճութեանցը համը չառնող մարդուն համար անտանելի բան է) : Երրորդ պայմանն այս է որ այն զգացմունքն ունենալու փափաքին պատճառ հարկը չըլլայ : (Անոր համար, քանի որ օղը ցուրտ է, տաքութեան զգացմունքը կըսիրենք. անօրութեան զգացմունքը ամեն օր վրայ գալով՝ ամեն օր ալ հացը համով կուգայ աղքատներուն. նոյն բանը կրնայ ըսուի նաեւ ծխախոտի եւ ուրիշ բաներու համար : Այս բանն ոջ միայն այսպիսի բնական՝ այլ նաեւ բարոյական զգացմանց մէջ կըպատահի : Օրինակի համար, որովհետեւ ազատութեան փափաքը գրեթէ անզաղար արժարժելու հետ է, բանտ դրուած մարդուն կսկիծը ոջ երբեք կըմեղմանայ, եւ արճըկուելու գուարճութիւնը կրնանք ըսել բէ այնչափ անելի շատ է՝ որչափ որ շղարայական կեցած ժամանակը երկար է) : Չորրորդ պայմանն է որ այն զգացմունքը հետ զնետէ չաւրէ չբերացընէ այն գործարանը՝ որուն վրայ որ ազդեցութիւն կընէ, եւ շատ անգամ կրկնուելովն ու երկըննայովը՝ ուրիշ զգայարաններն ալ չգրգռէ ու ցար չսաստկացընէ : Այս ալ կայ որ բնական ու բարոյական ուժերուն տկարանային է որ գործողութեան մի եւ նոյն սաստկութեանը մէջ՝ ցաւ տուող զգացմունքը պակսելու տեղ՝ հետ զնետէ պիտի աւելնայ : (Ուստի ցաւեր կան որ անտանելի կ'ըլլան երբոր կրկնուին ու երկըննան) ¹ :

մէջ յայտնի է որ անգարարը մէկզինէ գաւազաններուն շարժմանը վրայ աչք պիտի ունենայ, մէկզինէ ալ ձեռուրներուն այնպիսի շարժմունքներ պիտի տայ որ գաւազանները ուղղահայեաց մնան. ուրիշ կողմանէ ալ ուշ պիտի ղեն որ ինքը վար չիլնայ. եւ անա այս բաներս ամենն ալ վայրկեանական իմացողութեամբ մը կըլլան ու շուտ մը կըմոռցուին :

¹ Ովիզիտս իր եղերերգութեանցը մէջ (գիրք Գ, եղեր. Ը) կըսէ.

Ոջ օղ տեղույս եւ ոջ ջուր,
Ոջ անձրեւ ոջ հով քամի,
Աւաղ, օգուտ մ'ինձ չունին,
Սիրտս օրէ օր կըմաշուի :

Կան բուն հոգւոյս կազմուածքէն
Մարմինս հիւանդ է եւ խելոյձ,

Որովհետեւ ինչ է. իցէ զգացմունք ոմանց վրայ
աւելի բարակ է քան թէ ուրիշներուն, աւելի անոնց
դատաստանին ճգելու է այլ է. այլ իրաց յատկութիւն-

Կամ այս կլիման է պտտնաւ
Որ բնկայ այս ցաւոց մէջ :

Դէշ երազներ գիտանցեն
Քանի որ հոս եմ եկեր,
Ոսկոր ու չոր կաշի եմ,
Բընաւ սրնունդ չեմ առներ :

Այն տըխուր գոյնն որ կառնուն
Աշնանային տերեւներ
Երբոր պաղէն զարեւին
Զրման առջի ցուրտ օրեր,

Վերաս նոյն գոյնն է տիրած,
Զունիմ եւ ճար ու ճարակ,
Գանգատ կրեմ ցաւերէս,
Ե՞րբ կրմարի այս կրքակ :

Առողջութեան է կարօտ
Միտքս ալ մարմնոյս հաւասար,
Երկուքն ալ խեղճ ու բըշուտ
Զիս կրտանցեն անդադար :

Դարձեալ կըսէ (Դիրք Դ, եղեր . 2)

Շատ ժամանակ ալ անցաւ,
Համբերութիւն եւ ջուսայ.
Նոյն ցաւ կըզգամ ի սրտիս
Ինչ որ երբ նոր բսկըսայ :

Այսօր սաստիկ ալ է ցաւս
Քան թէ ուրիշ ատեններ .
Երկարելով կաճի
Թէ եւ ինքզինք չիփոխեր :

Ներուն զգացմունքը որոշել՝ քան թէ քանձը զգացմունք
ունեցողներուն. անոր համար ահա ճշտեալ տախ-
տակը կըդնեմ հոս :

Այսօրուան պէս ոչ երբեք
Եւ իմ ցաւերս ճանչցեր եմ.
Բայց որչափ լաւ ալ ճանչեամ
Վընասը լաւ կըտեսնեմ :

Ոչ փոքր օգուտ է եւ այն
Որ մարդս ըլլայ բարձ ու ժիր,
Եւ ոչ երկայն ցաւերով
Սիրտը մաշած վըշտակիր :


Երբ նոր ըմբիշ մը տաք տաք
Ասպարեզին մէջ մըտնէ,
Քաջ՝ բայց յոգնած մարդուն ալ
Նա շատ զիւրաւ կըշաղքէ :

Դարձեալ (Դիրք Է, եղեր . Բ).

Բայց միտքս միշտ է տըկար
Ու ոչ երբեք կուծովնայ.
Ինչ ցաւ առաջ որ կըզգար՝
Այժմ ալ ըզնոյն կիմանայ .

Եւ այն վերքերն որ զօցել
Կըյուսայի եւ առաջ,
Այնպէս գիտ կըբարբարեն
Որպէս թէ նոր են բացուած :

Իրաւ է, մանր ցաւեր
Կըմնումանան ատենով,
Բայց ծանրերուն նեղութիւն
Կաճի ատեն անցնելով :



ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՏՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՈՐՈՇՈՒՄ ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍԱՍՏԻԿ ՍՈՒՐ	ՈՉ ԱՅՆՁԱԿԱՆ ՍՈՒՐ	ԳՈՐԾԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ	ԲՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԿԱՆ ԿԱՄ
ՃԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Խիստ տկար	Բարձր լուրջությամբ խնայողությամբ Ֆինանսական միջոցներ	Կապիտալի անհամարժեքություն	Բնական ժողովրդական
ՀՈՏՈՏԵԼՈՒԹՅՈՒՆ	Միջակ վար	Վարչական մարմին Բնակարաններ Գյուղատնտեսական Կոնստրուկցիաներ Կենտրոնական Անտի-համաճարակային	Կապիտալի անհամարժեքություն	Բնական ժողովրդական
ԶՈՏՈՏԵԼՈՒԹՅՈՒՆ	Միջակ	Կոնստրուկցիաներ Կենտրոնական Անտի-համաճարակային	Կապիտալի անհամարժեքություն	Բնական ժողովրդական
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ	Միջակ վար	Կոնստրուկցիաներ Կենտրոնական Անտի-համաճարակային	Կապիտալի անհամարժեքություն	Բնական ժողովրդական
ԼՈՍԻՆՈՒԹՅՈՒՆ	Խիստ գոյատևող	Կոնստրուկցիաներ Կենտրոնական Անտի-համաճարակային	Կապիտալի անհամարժեքություն	Բնական ժողովրդական